ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Հայ տպագրութեան 400-ամեակի համար Թիֆլիզում ընտրուած Յանձնաժողովը, ի նկատի ունենալով ընդհանուր ժողովում արտայայտուած ցանկութիւնը, իր առաջին գործերից մէկը դարձրեց հայ գրական գործիչներին օգնող մի ընկերութիւնը հաստատելը։

Յանձնաժողովը մշակեց մի կանոնադրութիւն, որով Թիֆլիզում հաստատւում է հայ գրողների փոխադարձ օգնութեան ընկերութիւն և այդ կանոնադրութիւնը մի խումբ հայ գրողների ստորագրութեամբ ներկայացրեց օրինական կարգով Թիֆլիզի նահանգական ատեանին։

Այժմ հաստատ աղբիւրից մենք տեղեկանում ենք որ նահանգական ատեանը արդէն հաստատել է այդ կանոնադրութիւնը։

Շուտով կը հրաւիրուի նոր ընկերութեան անդամների ընդհանուր ժողով՝ վարչական մարմին ընտրելու և ընկերութեան գործունէութիւնն սկսելու համար։